

«ԱՄՊ / ՁԻ» ԵՎ «ԳԵՏ / ՁԻ» ԱՌԱՍՊԵԼԱԲԱՆԱԿԱՆ
ԿԱՊԻ ՄԻ ԶԱՆԻ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐ

Մերձավորարևելյան և եվրոպական հնդեվրոպացիների պաշտամունքներում իր ուրույն դերն է խաղացել եեծյալ դիցուհու պաշտամունքը¹: Մ.թ.ա. 16-12-րդ դարերի Պիլոսի սալիկները արդեն խոսում են «Ձիաաիկնոջ» (Պոնաիա հիւպոս) օճավորված պաշտամունքի մասին: Այդ ուղղակի կապի մեջ էր Դեմետրա դիցուհու պաշտամունքի հետ, որովհետև վերջինս Արկադիայում պաշտվում էր ձիագլուխ կնոջ տեսքով: Հին եույներն հավատում էին. որ Պոսեյդոնը կենտկցել էր Դեմետրայի հետ այն ժամանակ, երբ ինքը եովատակ էր դարձել, իսկ Դեմետրան գամրիկ: Մեր թեմայի առնչությամբ նշենք, որ Դեմետրան Կորնթոսում համարվում էր հանքային աղբյուրների խնամակալը և, ըստ այդմ, կրում «Ջերմուկային» (Թերմասիա) մակդիրը²: Բայց Դեմետրան եամարվում էր ոչ միայն ընդերքային, այլև երկնային ջրերի աիրուհին: Դրա մասին է խոսում արկադիական ձիագլուխ արձանը, որի մի ձեռքին դեվիին է (ծովերի խորերդանիշը), մյուսում՝ ալավնի (երկնքի խորերդանիշը)³: «Ձիաաիկնոջ» պաշտամունքը լայն տարածում ուներ նաև կելտական ցեղերի մեջ: Նրանք այս դիցուհուն կոչում էին էպոնա՝ մի անունով, որն հստակ «ձիական» ստուգարանություն ունի⁴:

Հին հնդեվրոպացիները պաշտում էին նաև այդ դիցուհու «ձիական» ստուգարանությամբ անուններ կրող երկվորյակներին, կամ նրան ուղեկցող գույգ եեծյալներին: Դրանցից էին եունական Դիուսկուրները, էպոնայի ուղեկից գույգ ձիերը, «ձիական» ստուգարանությամբ անուններ կրող անգլիական Հորսա և Հեգհատ եդրայրները, եին հնդկական Աշվինները և այլն, որոնք բոլորը ժամանակին պատկերացվել են ձիակերպ կամ հեծյալների տեսքով: Հնդեվրոպական տարբեր ժողովուրդների վամնդույթներում դիցուհին (կամ նրան եամարժեք Կենաց ծառը) պատկերվում էր կինտրոնում, իսկ եեծյալների նախասաիպ գույգ ձիերը՝ նրանից աջ և ձախ: Երբեմն գույգ ձիերի դիտարեն պատկերվում էր գույգ գլուխներով մի ձի: Գլուխները նայում էին եակադիր կողմից, իսկ նրանց միջև տեղադրված էր լինում ձիու մարմնին ըրազմած մարդակերպ դիցուհին: Այս դիցուհին և նրան ուղեկցող գույգ եեծյալները առանձնաեատուկ պաշամունքի էին արժամացել Թրակիայում և Դակիայում⁵: Այս նույն եռյակին եանդիպում ենք նաև սկյութա-սարմատական ցեղերի թողած նյութական մշակույթի եուշարձաններում⁶: Ավելի ուշ նրանք երևան են գալիս արևելասլավոնական և, վերջապես, ոուսական ժողովրդական արվեստի գործերում⁷: Այդ նույն եռյակը պաշտվել է նաև հին Հայաստանում: Այդ է, նախ և առաջ, վկայում Բրիտանական թանգարանում պահվող այն արձանիկը, որը պատկերում է եակադիր կողմեր նայող գույգ գլուխներով մի ձի և նրա վրա ըրազմած մի եերարձակ կին⁸:

«Ստանա ծոեր» դյուցուգնավեպի Ծովինարի և իր երկվորյակների ևս եեծյալների աեսքով պատկերացվելու մասին է խոսում պատումներից մեկի հետևյալ դրվագը: Իրենց «եայր» թագավորին ապանած երկվորյակները դիմում են իրենց մորը.

1. В. Иванов, Древние культурные и языковые связи южнобалканского, эгейского и малоазийского (анатолийского) ареалов, "Балканский лингвистический сборник", М., 1977, с. 14-16.
2. А. Тахо-Годи, Деметра, "Мифологический словарь", М., 1991, с.181-182.
3. Ян Парандовский, Мифология: Верования и легенды греков и римлян, М., 1971, с. 23, 102.
4. Е. Штаерман, Эпона, "Мифологический словарь", с. 637.
5. И. Кругликова, Дакия в эпоху римской оккупации, М., 1955, с. 147.
6. Е. Кузьмина, Конь в религии и искусстве саков и скифов, "Скифы и сарматы", Киев, 1977, с. 102-109.
7. Б. Рыбаков, Язычество древней Руси, М., 1988, с. 505, 507, 528, 529-530.
8. E. Herzfeld, Iran in the Ancient East. archeological studies presented in the Lowell lectures at Boston, London- New-York, 1941, p. 175.

«Նանն՝ եունար ըմ ունիս, խարճա:
 Նաննն պատրաստութեմ տեսեր էր.
 Իրեք ձի թամբքե, գամե, հազըր կայմեր ա...
 Հացից-բանից վերցաց, եեճան ու ...
 Փամբընու ձոր դո՞ր իս, էգանք քեզի»⁹:

Վիպական Ծովհնարի՝ եեծյալի տեսքով, իսկ ավելի վաղ՝ ձիակերպ. ըմբռնումը արգասիքն է՝ մեր մտխնհանքի երևակայության մեջ ինչպես երկնային ծով-լճերի և գամբիկների առասպելաբանական գուգորյման, այնպես էլ մույն գամբիկների և երկնային ծովի (մաև վերջինիս եեա սերտ կապի մեջ գտնվող ամպերի և ամպրոպային երևույթների) գուգորյման: Հայկական առասպելաբանական գրույցներից մեկի եամաճայն, «Բամբակե պսոավը մառած բամբակե ձիու վրա, ձեռին բամբակե մարակ՝ քշում է երկնքով: Նրա ձիու ոտների դոփյունից առաջանում է որոտը»¹⁰: Նախ այն մասին, թե ինչպես է այստեղ եայտնվել բամբակը: Հին մարդկանց մտապատկերներում սպիտակ ամպերը գուգորվում էին բամբակի քուլաների եեա, որի պատճառով *քուլա* բառը գործածվում էր նշելու եամար մաև սպիտակ ամպերի կուտակումները: Հայկական հեանյալ եանեյուկը մամա գուգորյման արդյունք է. «Ձորը լիզը բըմբակու քուլա, թող փըշըմ, ասես բմբակը հո՞ր ա»¹¹: Ղարադաղյան այս եանեյուկի պատասխանը «ամպ» է: Ուրեմն, վերորերյալ առասպելական գրույցում «բամբակե»-ն նշանակում է «ամպ» և «սպիտակ»: Բամբակե պսոավը ամպե սպիտակագգեստ կին է, բամբակե ձիո՝ նրա ամպե սպիտակ ձիո, իսկ բամբակե մորակը՝ նրա ամպե սպիտակ մորակը, այսինքն՝ կայծակը: Ինչպես տեսանք, որոտն էլ ընկալվում էր որպես նրա ձիու (ամպե սպիտակ ձիու) սմբակների դոփյունը:

Ամպրոպային եեծյալ էակի մախառնայի ձիակերպ պատկերացվելու վկան է ձիածին բառը, որը «ձիու ծնած, ձիուց ծնված» նշանակելով համոզեղձ¹², «ըսա քերթողաց՝ որոտմունք և շանթք իբրև յերկվարաց Արամագոյայ կամ Արեգական առթեալ»¹³: Ի նկատի առնենք, որ Արամագոյից և Արեգակ աստվածությունից առաջ այդ ձիերը պատկանելու էին իրեն՝ որոտի ու շանթի իգական աստվածությանը: Հենց վերջինս էլ լինելու էր մայրության եովանավորը: Պատեանական չէ. որ այսօր էլ հայը ծննդկանի և նորածնի բարձերի տակ դանակ կամ դաշույն (իսկ անցյալում՝ մաև սուր) էր դնում: Մորն ու մանկանը չար աչքից պաշտպանելու կոչված այդ և երկաթե ալ իրերը «մեծ մասամբ մույնն են՝ կայծակի խորերդանիշներ»¹⁴: Հայկական հեքիաթները բացաեսյտում են կայծակի խորհրդանիշն եանդիսացած դաշույնի և ծովհնարի՝ որպես ամպրոպային էակի, սերա կապը: Դրանցից մեկում կտրիճ պաաանին «ձեռը կոխկն ա տանըմ, դրուստ որ մի խանջալ ա հանըմ: Խանջալի վրա տենըմ ա մի սիրուն ախչկա նկար, տակին գրած՝ ծովհնար»¹⁵: Իսկ երր մա «գնաց մատվ պալատը, որդի իհագ դուռ ջեեց, խանջալը դեմ արավ թե չէ՝ բաց էլալ: Գնաց մի օթախ մտալ, որ՝ կտրմրութեմի շոխկն աչկերը ծակեց: Տեհալ մի սիրուն ախչիկ մստած, եենց իրա խանջալի վրի նկարն ա որ կա»¹⁶:

Կայծակի անձնավորում աստվածության եեծյալ կնոջ տեսքով պատկերացումներն արտացոլված են ինչպես հայ ժողովրդական եեքիաթներում և առասպելական գրույցներում, այնպես էլ ժողովրդական եավատալիքներում: Հեքիաթներից մեկի ասացողն ամպրոպի

9. «Մասնա ծոեր», *Ե. ք.* առաջին մաս, *Երևան, 1944*, էջ 259:

10. Ա. Ղանալանյան, *Ավանդաատմ.* *Երևան, 1969*, էջ 409:

11. Մ. Հարությունյան, *Հայ ժողովրդական եանեյուկներ*, *Երևան, 1965*, էջ 11:

12. «Նոր բառգիրք հայկազեան լեզուի», *Ե. 2*, *Երևան, 1981*, էջ 156: Մա. Մալխասեանց, *Հայերեն բացարական բառարան*, *Ե. 3*, *Երևան, 1944*, էջ 173:

13. Նույն տեղում:

14. Մ. Արեղյան, *Երկեր*, *Ե. է.* *Երևան, 1975*, էջ 74-76, 96-97:

15. «Հայ ժողովրդական եեքիաթներ», *Ե. 8*, *Երևան, 1977*, էջ 444:

16. Նույն տեղում, էջ 446:

հեակյալ նկարագրությունն է անում. «Քամին որ վշագնում չի. ծառեր են՝ որ գեղնի ենտ դգվում են: Ամպն ու յանգր գեղինն առել են. ծովինաըը էնենց խաղում, ոը կոսես թե ուզում ա աշխարքը կրակ տա»¹⁷: Ծովինար-կայծակը երբ լմրոնվել է մարդակերպ, պատկերացվել է երեղեն ձիով երեղեն հեծելուեի, որի աչքերից եուր է ժայթքում, խակ կայծակը նրա երեսի ցուքն է: «Ահա երկնքում երևում է ծովինարը կեռամեռաիկ և փայլատակում լույսի ու կըակի մեջ: Մսկ րուպե չանցած երկինքն իր կրծքից սար ու ձորին պտղարբերող խոնավություն է ուղարկում: Այնժամ րոյորն ուրախանում են ու րացականչում.

Ջան, գորավոր ծովինար,

Երեսեարքդ մեզ արա,

Գտոն ու աչառ քեզ մատաղ.

Ցավը մեզնից զանց արա»¹⁸:

Առասպելարանական ծովինարի ժառանգորդները ցնկը՝ քրիստոնեական Աստվածածինը, նույնպես հտնդես է գալիս մոր ու մանկան եովանավորի դերում և նույնպես պատկերացվում էր ամսրոպային հեծյալի անսքով: Նրան ուղղված աղոթքներից մեկում ասվում է.

«Թագա հացի ֆոտ էկավ,

Ելեք աչեցեք վով էկավ.

Իրեք-իրեք պոզ ձիավոր,

Հրաշալի լուս երեսով

Իրեքն ա կանամ: կապավոր:

Մեկը Հլաուս, մեկը Քրիստոս,

Մեկը սև անտարոց Ասավաըածին:

Էկավ սարով, իջավ ձորով...»¹⁹:

Հեծյալ Աստվածածինն ուղեկցվող գույգ հեծյալները, եակառակ իրենց անունների, ո: թե նրա, այլ նրա նախատիպ յիցուհու երկորյակ որյիներն են: Քրիստոնեության ազդեցությունն սյստեղ այնքան մակերեսային է, որ Մսրիամ Ասավածածնի միածին որդու փոխարեն այստեղ հանդես են գալիս երկուսը՝ առանձին Հլաուս և առանձին Քրիստոս: Աստվածածնի ձեռքի թոնքի անթարոցը նույնպես վերելու է նրա նախատիպի և բացառալուում է վերջինիս ամպրոպային էությունը: Այս առթիվ եիշենք, որ եայ ժողովրդական հավատալիքներում «կայծակն եաճախ մտածվում է նաև որպես երկաթե գեներ: շիկացած երկաթե ճիպոտ, որ երեշտակները նետում են չարքերի վրա: Այն շիկացած խրվում է գեսին: Եթե մարդ գտնի և դրանից թուր կոի, ապա այն կունենա կայծակի թրի րոյոր եատկությունները»²⁰:

Դաշույնը և սուրբ կայծակի (նաև ամպրոպի աստվածություն) խորերդանիշներն են համարվել աշխարհի շատ ժողովուրդների հավատալիքներում: Հիշենք մեր «Մասնա ծոերի» թուր-կեծակին: Հինելով ամպրոզի ձիակերպ աստվածությունների խորերդանիշներից, դաշույնն ու սուրբ լրենք ևս կարող էին ըմրոնվել ձիակերպ, այսինքն՝ կարող էր տեղի ունենալ «սուր» և «ձի» եասկացությունների գուգորդում: Առ է վկայում մանգաղի մասին եեակյալ եանելուկը. «Դամա-դամա՝ լեզգու դամա (դաշույն), լավ ձիու պես փոնգում ա»²¹: Մանգաղը՝ գյուղատնտեսական այդ գործիքը, եիշեցնում է մանգաղաձև կեռ թուրը՝ ընդերքի ոսգմիկ աստվածությունների գեները: Հին թարելոնյան կնիքներից մեկի վրա Ներգալը պատկերված է մանգաղաձև սրով²²: Հայասական ցեղամիության գլխավոր ասավածը մ.թ.ա. 14-րդ դարի խեթ-եայասական դաշնագրում

17. Նույն տեղում, էջ 31-32:

18. Մ. Արեղյան, նշվ. աշխ., էջ 71:

19. Մ. Արեղյան, նշվ. աշխ., էջ 98:

20. Նույն տեղում, էջ 74:

21. Մ. Հարությունյան, նշվ. աշխ., էջ 125:

22. В. Афанасьева, Нергал, "Мифы народов мира". Энциклопедия в двух томах, том 2, М., 1988, с. 212.

եանդես է գալիս U.GUR գաղափարագրի տակ²³: Դրանից կարելի է կոստել, որ նա եղել է ոչ միայն ամպրոպային. այլև ընդերքային աստվածություն. որովհետև այդ նույն գաղափարագրի տակ Միջագետքում եանդես էր գալիս Ներգալը: Ի դեպ, այդ գաղափարագրի աքքադերեն եամարժեքն էր namsaru «սուր, սուսեր» բառը²⁴:

Նախապես ձիակերպ, ապա հեծյալի տեսքով ըմբռնված դիցուհու սլաշամունքում ամպրոպային երևույթներին հատկացված մեծ տեղը իր արձագանքներն էր գաել նրա հետնորդներին առնչվող կրոնական պատկերացումներում ևս: Գարեգին Սրվանձախյանցի ուղևորություններից մեկի նկարագրության եեակյալ եաավածը վերաբերում է եին Անգեղտուն գավառի (իսկ Անգեղ=Ներգալ) տարածքում գտնված Արկնո Բարձրաեայաց Մուրթ Աստվածածին կոչված վանքին: «Մտանք Բարձրաեայաց Ս. Աստվածածին վանքը, որ շինված է ապտոած աեագին բարձրության մր վրա, որ կը կոչվի Արկնո բերդ... Ս. Տաճարին մեջ ճրագ մը տեսանք՝ վրան արծաթ, մեջը հողե, գոր կվստեմ կայծակի օրերը, և կանվանեն «Արնեճրագ, կայծակի ճրագ», վանքն իր դիրքով եաճախ եմթակա է կայծակի»²⁵: Որ այս վայրը նախապես ձոնված է եղել ամպրոպային ինչ-որ աստվածության, պարզվում է կայծակնաեաը տեղանքում տաճարի գոյության, այդ տաճարում «արնե ճրագ, կայծակի ճրագ» կոչված պաշտամունքային առարկայի առկայության և նրա եենց կայծակնաշատ օրերին վստելու իրողություններից: Իսկ որ ամպրոպային այդ աստվածությունը եղել է իգական աստվածություն, ցույց է տալիս վանքի Մուրթ Աստվածածին անունը:

Ամպրոպային այս աստվածության նաև ձիակերպ կամ հեծյալի տեսքով սրստվելու մասին է իոոսում եետևյալ ետնգամտքը: Ասորեստանի Աշուրնասիրայալ 2-րդ եազավորը մ.թ.ա. 9-րդ դարի առաջին կեսին արշավելով Հայկական լեռնաշխարհ և եաանելով մինչև Տիգրիսի վերին եոսանքի շրջանը, այստեղ՝ եետագա Արկնի քաղաքի և Արկնո վանքի շրջակայքում, եիշաաակում է Արկանիա (Arqania, Arkania) լեռը և Ջամբա (Zamba) երկիրը²⁶: Աչքի է գարնում վերջինիս և եայերեն *զամբիկ* բառի նույնությունը: Այս բառը «էգ ձի» է նշանակում և ժամանակին գործածվելու էր առանց *-իկ* վերջածանցի: Դա եմ վկայում *զամպուա* (զամբուո) «ձիածոթրին» և *զամբուո* «իշամեղու» եայերեն բառերը: Վերջածանցի եամար եմնտ. *մի-ա-եամ-ուո, սարս-ուո, թաթ-ուո, ծակ-ուո*²⁷: Ըստ այսմ, «իշամեղու» իմաստով մնան ենչող բառերի առկայությունը պարսկերենում և արարերենում պետք է բացատրել եայերենից այդ լեզուների կատարած փոխառությամբ:

Չամբա երկրանվան եետ միասին հիշատակված *Արկանիա* լեռնանունը պահպանել եմ Արկնի րնակավայրը, Արկնո վանքը և Արկնո բերդը: Սրանց րուրի անունները արմաաակից եմ եայերեն *արկանել* և *արկնել* բայերին: *Արկանել*-ը մի շարք իմաստներից բացի ունի նաև «ածել, լցել» իմաստը («ջուր արկանելի սափոր»), իսկ *արկնել* նշանակում է «տեղալ» («անձրև կարկնել»)՝ Այսպիսով, Արևմտյան Տիգրիսի վերնագավառում, եամեմատարար սամեմափակ մի տարածքում, առկա է եեթանոսական ինչ-որ դիցուհու փոխարինած քրիստոնեական Աստվածածնի պաշտամունքը՝ իր «կայծակե ճրագով», «անձրևային» ստուգաբանությամբ *Արկանիա* լեռնանվամբ (և նրա ուշ շրջանի տարրերակներով), ինչպես նաև «ձիական» ստուգաբանությամբ *Չամբա* երկրանվամբ: Ուրեմն, գործ ունենք մի եին իգական աստվածության պաշտամունքի և այդ պաշտամունքից անբաժան «ջուր-անձրև-կայծակ-ձի» իմաստաբանաեան շոթա եաճամած հասկացությունների տեղանվանական ղրևորումների եետ:

Ամպրոպի իգական աստվածության ձիակերպ պատկերացման տեսանկյունից

23. В. Хачатрян, *Восточные провинции хеттской империи (вопросы топонимики)*, Ереван, 1971, с. 148.

24. իր. Киманян, *Историко-лингвистические работы к начальной истории армян*, Ереван, 1956, с. 87-90.

25. Գ. Սրվանձախյանց, *Երկեր*, հ. 2, Երևան, 1982, էջ 411, 413:

26. Н. Арутюнян, *Топонимика Урарту*, Ереван, 1985, с. 36-37, 78.

27. Հայոց լեզվի պատմական քերականություն, հ. 2, Երևան, 1975, էջ 88:

28. Սա. Մալխասյանց, *Ոչվ. աշխ.*, հ. 1, Երևան, 1944, էջ 271:

ուշագրավ են եետևյալ յիաստեղը ևս: Հայերեն *ամպ* և *ամպրոպ* բառերը ծագում են հ.-հ. միևնույն արմատից, իսկ *ամպ* բառը իր սովորական իմաստից բացի կիրառվում էր նաև «անձրև» և «շանթ, կայծակ» իմաստներով²⁹: Հայերեն *գամբիկ* բառը տրոհվում է *գ-ամբ-իկ* բաղադրիչների: Մրա *ամբ* արմատը «ամպ» է նշանակում, որովհետև միևնույն բառի *ամբ* և *ամպ* ասորերակներից «ենագույն ուղղագույն ձևը առաջինն է, որի յիոխարեն այժմ ընդունված է *ամպ...*»³⁰: *Չ-ամբ-իկ* բառի մեջ *գ-*ն այն նույն նախածանցն է, որն հանդիպում է ուրիշ բազմաթիվ բառերում ևս (եմմտ. *գ-արդ, գ-գեսա, գ-եռ-ուն, գ-եղծ-ել* և այլն), իսկ *-իկ-ը*, հավանաբար, ծագում կամ պատկենելությունն ցույց տվող վերջածանցն է (եմմտ. *ջր-իկ, գոռե-իկ, մարտ-իկ, հնդ-իկ* և այլն):

«Զիաաիկին» սլետը է լինել նաև ուրարտական Սարդի (Sardi) դիցուհին, որի անվան առաջին *սար-* բաղադրիչն առնչվում է մի կողմից «Սասնա ծռերի» երկվորյակների մոր մեկ ուրիշ անվան՝ *Սառան-ի* (<Սառ-ան), իսկ մյուս կողմից՝ հայերեն սարակ «էգ ծի» բառի³¹ առաջին բաղադրիչների եետ: Ուրարտական այս դիցուհու և ասորեստանյան Իշթարի եամապատասխանությանն առաջինն ուշադրություն է դարձրել Գ. Ա. Մելիքիշվիլին³²: Ըստ Բ.Բ Պիտրովսկու, Սարդին Արուայակ (Վեներա) մոլորակի անձնավորումն էր և նույն մոլորակի անձնավորում ասորեստանյան Իշթարի մեան ուներ միևնույն խորհրդանիշը³³: Սարդի դիցուհու անվան մեջ, սովորաբար, առանձնացնում են *ardi* մասը և նրան վերագրում «աստղ» իմաստը³⁴: Բայց այդ դեպքում անբացատրելի է մնում նախածայն *s-*ն: Գ.ր. Ղափանցյանն այս դիցուհու անունն առնչում էր լյուդիական Մարդիս (Σαρδισ) «Տարի, Արև» աստվածության անվանը և իրանական *sard* «տարի» բառին: Բայց նա այս նույն դիցանունն էր տեսնում նաև Սարդուրի (Sarduri) անձնանվան եիմքում, ընդամենը նշելով, որ վորջրարս *sar-* մասը կարդացվել է նաև RI և ընկալվել որպես «Իշթար»³⁵: Սարդի և Իշթար եամապատասխանությունն ընդունող ուրարտագետ Ս. Հմայակյանն ամրապնդում է այն՝ մի սեպագրում Սարդուրի I-ինի անունից առաջ դրված է Իշթար դիցուհուն նշանակող գաղափարագիրը՝ դիտորոշյալով³⁶:

Մեր կարծիքով, *Sar-di* դիցանվան բուն իմաստը «գամբիկ աստված, ծի աստված» է: Նրա երկրորդ բաղադրիչը նույնական է *Hal-di* դիցանվան երկրորդ բաղադրիչի հետ և, ըստ երևույթի, ծագում է հ.-հ. **dhes* (> հայ. *դիք*, կամ **dei*-> հայ. *տի*) արմատից: *Sardur-* անձնանունն, այս դեպքում, նշանակելու է «գամբիկատու, ծիտծին»: Նրա երկրորդ բաղադրիչը լինելու է հ.-հ. **dur*-տրմատից (> հայ. *տուր-ք*) սերած մի ձև: Անձնանվան պարունակած իմաստի առթիվ կարող ենք եիշել ծիածին բառի «որոամունք և շանթը իբրև յեղիվարաց Արամագոյայ կամ Արեգական առթետլ»³⁷ իմաստը: Ըստ այսմ, պատահական չէ. որ քննության առաջկա *սար-* արմատը առկա է ինչպես «գամբիկ, էգ ծի» նշանակող *սարակ* բառում, այնպես էլ ամպրոպային երևույթների եետ ուղղակի կամ վտխարեբերական կապեր բացառալու դեպքում հետևյալ բառերում: *Սարել* «դողալ, կայծակահարել, կամ սարտել»³⁸, *սարել* «խիզախել, խրոխտալ, սպառնալ, գոչել, մոնչել ի վեր ուրուք»³⁹, *սարել* «նետել, դեն ձգել, րուրս ժայթքել, ցայտել, սարքել, լարել» («նետը աղեղի վրա դրեց, սարեց») ⁴⁰, «*սարեմէջ-գեղարդ*»⁴¹: Սարդի դիցուհու ամպրոպալին-

29. Հ.ր. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. 1, Երևան, 1971, էջ 162-163:

30. Նշվ. աշխ., էջ 163:

31. Հ.ր. Աճառյան, նշվ. աշխ., հ. 4, Երևան, 1979, էջ 184: Սա. Մալխասյանց, նշվ. աշխ., հ. 4, Երևան, 1945, էջ 191:

32. Գ. Մելուքիշվիլի, *Ուրարտու, Երևան, 1954, ս. 374.*

33. Բ. Պիտրովսկի, *Ванское царство (Урарту), М., 1959, с. 226; նույնի Урартская мифология, "МНМ", т. II, с. 550.*

34. Գ. Մելուքիշվիլի, նշվ. աշխ., էջ 36, 236:

35. Գ.ր. Ղափանցյան, *Ուրարտուի պատմությունը, Երևան, 1940, էջ 49:*

36. Ս. Հմայակյան, *Վանի թագավորության պետական կրոնը, Երևան, 1990, էջ 100, ծան. 96:*

37. «Նոր բառգիրք հայկական լեզուի», հ. 2, էջ 156:

38. Հ.ր. Աճառյան, նշվ. աշխ., հ. 4, էջ 187:

39. Նույն տեղում:

40. Սա. Մալխասյանց, նշվ. աշխ., հ. 4, էջ 192:

41. «Բառգիրք հայոց», Զննական բնագիրք, առաջարանը և ծանոթագրությունները՝ Հ.Մ. Ամալյանի, Երևան, 1975, էջ 285:

մարտական բնույթը բացառապես *սար-* արմատի եիշյալ իմաստների առնչությամբ եիշենք, որ Մարդիի ասորեստանյան եամարժեքը երբեմն ներկայացվում էր նետերը թիկունքին և կոչվում էր «իշթար մարտնչող»: Ըստ երևույթին, պաաաեական չէ, որ *իշթարի* մարաշունչ բնույթը առավել եսաակ էր դրսևորվում նրա պաշտամունքի եյուսիսային կենարոններում, այսինքն՝ Հալկական լեոնաշխարհի մերձակայքում⁴²: Մարդի դիցուեու և վիպական Մաոան-ծովիմարի եետ որոշակի ընդեանրություններ է դրսևորում նաև *իշթարի* խեթ-իտեիական գուգաեետ Մաուգան: Նա ոչ միայն հեծյալ ասավաժություն է,⁴³ այլև երկեետ մի էակ է՝ իր *astashi-tahashi* («կանացիություն-առնականություն») դրսևորումներով⁴⁴: Կասկաժ չկա, որ այս դեպքում *իշթար-Մաուգայի* դիցարանական կերպարում համաեեղվաժ արական և իգական սկզբունքները խոսում են նրա երկնային-ընդերքային ջրերի անձնավորումը լինելու մասին: Հմմտ. մեր ժողովրդական եավատալիքների և «Մասնա ծոերի» ծովիմարը, ինչպես նաև նրա երկվորյակների անարատ եղացմամբ աշխարե գալու եանգամանքը:

Մեր կարծիքով, Շիրակի վադեմի տերերը իրենց սերաժ են եամարել նույնատիպ մի եեծյալ դիցուեուց: Դա է վկայում Շիրակի վադմիջնադարյան տերերին՝ սլարթևական Կարեն տոեմից սերաժ Կարենյաններին,⁴⁵ նրանցից ժաոանգություն մնացաժ *Կամսարական* աոեմանունը (նույն կերպ այս Կարենյանները երբեմն կոչվում էին *Աշարունի, Արշարունի*՝ Երասիսաժոր-Արշարունիք գավաոի վադեմի տերերից ժաոանգաժ տոեմանունով)⁴⁶: Կարենյան-Կամսարակունների տոեմական ավանդության ետանձայն, իրենց նախնին եղել է Կամսար անունով մեկը, որը «խաղացեալ ամեմայն ընտանեալ իրովք եւ աղխի գայ աո Տրդատ մեր թագաուոր, եղրարց նորա աո Շասրուե երթալով: Այս Կամսար աեազին քտջութեամբ նաեատակեալ աո եարթն ի պատերազմունս, ի շաեատակելն իրում եարկանի յումեմնէ սակերք գգուիւն. եւ վերացուցեալ մասն ինչ յոսկերէ սկաւաոակին, րժշկեալ ի դեղոց, պտկաս գոլով քոլորութիւն գագաթանն՝ անուանեցաւ Կամսար այնր աղագաւ»⁴⁷: Վադուց է նկատվաժ, որ այս դեպքում ի նկատի են աոնվաժ միջին և նոր պարսկերեն *kam* «քիշ,սակավ, աննշան» և *sar* «գուիւ» բաոերը⁴⁸: Նկատվաժ է նաև, որ Կամսար անվան այս բացատրությունը կրկնում է Շիրակի մեկ ուրիշ նախարարական տոեմի՝ Դիմաքայանների, աոեմանվան աոթիվ նույն *Խորենացու* բերաժ բացատրությունը.⁴⁹ «Եւ գՆերսէս գորդի որդւյ իրոյ սոնտուիւն Գիսակայ, ազգ գնա սերելով՝ անուն կոչէ գնաեատկութեանց եարն-Դիմաքսեան. քոնգի... գկէս դիմացն սուեերաւ ի վայր բերին ի վերայ Արտաշիսի»⁵⁰: Պարզ է, որ ինչպես տոեմանունների դեպքում էր, այս դեպքում ևս տեղի է ունեցել տեղական շիրակյան տվանդության յուրացում Կարենյանների կողմից: Նրանք տեղական-շիրակյան *Կամսարական* տոեմանունը, դիմակէս>Դիմաքս (եան) բացատրության եետևությամբ, բայց արդեն միջին պարսկերենով (պաեկավերենով) մեկնարոնել են ալը կերպ:

Կամսար անունը, մեր կարծիքով, գալիս է Շիրակի տարաժքի եին հնդեվրոպական որևէ ցեղի լեզվից և տրոեելի է *կամ-սար* բաղադրիչների: Այն իր երկրորդ բաղադրիչով հարում է վերոեիշյալ *սարակ* բաոին, *Մառան* վիպական անձնանվանը, ուրարտական *Մարդի* դիցանվանը և, եավանարար, եին հնդկական *Մարանյու* (Saryu) դիցանվանը: Մարանյուն մայրն էր եին հնդիկների ամեմապաշտելի աստվաժություններից եամարվաժ

42. В. Афанасьева, И. Дьяконов, Иштар, "Мифологический словарь", с. 263

43. M. Weippert, Über den asiatischen Hintergrund der Göttin "Asiti", "Orientalia", vol. 44. Roma 1975. fasc. 1, S. 12-21.

44. E. Laroche, Etudes de linguistique anatolienne III, II, Bilingues hurro-hittites, "Revue hittite et asianique", XXVIII, P., 1970, p. 61; J. Leclant. Astarté-cheval, "Syria", v. 37, P., 1960, p. 60.

45. Մ. Խորենացի, Բ, իէ:

46. Н. Адоиц, Армению в эпоху Юстиниана, Ереван, 1971. с. 243

47. Մ. Խորենացի, Բ, ձէ:

48. Մ. Խորենացի, Հայոց պատմություն, Աշխարհարար բարգմ. և մեկնարանությունները Սա. Մալխասյանի, Երևան, 1981, էջ 508, ծան. 237:

49. М. Хорезаци, История Армении. Перевод с древнеармянского языка, введение и примечания Гагика Саркисяна, Ереван, 1990, с. 254, пр. 556.

50. Մ. Խորենացի, Բ, յւէ:

երկվորյակ Աշվինների: Առասպելի եամաձայն, այս դիցուհին չհամակրելով իր ամուսին Վիվասվատին, զամրիկի անք առած վախճում է նրանից⁵¹: Բայց վերջինս եովատակ դարձած հետապնդում է նրան: Ի վերջո ամուսիններն եաշտվում են և ծնվում են Աշվինները՝ Նասատյա և Դասրա եղբայրները: Նրանց եաճախ անվանում են «ձիածիններ» և «զամրիկի զալիակներ»⁵²: Մառան-ը անունն է այն միևնույն անճնավորության, որը «Մասնա ծոերի» ուրիշ պատումներում կոչվում է *ծովինար*:

Մի պատումի եամաձայն, նա
«Կերթա, ձիու մը ռաաց տեղ կը գնտնի,
Որ էրկու կուց ջուր կա ինե, կը խմի
Մեկ թամամ, մեկ կիսաա կուց կ'ելնի ջուրն
էլավ էն տեղեն տարձավ՝
Մտավ գենա ուր յոտոտանին մեջ:
Ինն ամիս, ինն օր, ինն սրեաթ որ լմնցավ,
Աստված էրկու սղա խոուր Մառան խաթունին:
Ծնած ժամանակ խրեշտակ կու գա, ինոնց անուն կը տնի,
Մեկին Մանասար, մեկին Պաղտասար»⁵³:

Ամենայն եավանակությանը, պատեականության արդյունք չեն ինչպես եայ և հնդիկ երկորյակների ձիածին լինելու եանգումանքը, այնպես էլ նրանց մայրերի անունների ենչունտկան նմանության և «ձիական» ստուգարանության փաստերը: Պեաք է ենթադրել, որ կամ գործ ունենք միաանիական դարաշրջանի (մ.թ.ա. 2-րդ հազարամյակ) եայ-հնդարիական առնչությունների արձագանքի եետ, կամ ավելի վաղ ժամանակաշրջանից եկած ենդեվրոպական ընդեանուր ժառանգության եետ:

Կամսար անվան երկրորդ ռադադրիչի «ձիական» ստուգարանությունը հուշում է, որ նրա առաջին ռադադրիչը ևս կարող է ինչ-որ առնչություն ունենալ ձիու կամ ձիաբուծության եետ: Այս առթիվ, նախ և առաջ, արժե եիշել եայերեն *կամամ* ռադը (<կամ-ամ) ռադը՝ «ձիու տեսակ կում անուն»⁵⁴: Սրա -ամ վերջածանցի եամար եմնտ. *թառ-ամ*, *թարշ-ամ*, *խար-ամ*, իսկ կենդանական անուններից՝ *սիրամ* (վերջինս նշանակում է «ճակահին սպիտակ նշանով եգ»)՝⁵⁵: *Կամսար* անվան *կամ*- ռադադրիչին, թերևս, կարելի է առնչել նաև ոուսերեն *комонь* «ձի» ռադի արմատը (որի սղված ձևն են առանձին ոուսումնասիրողներ եամարում *конь*-ը)⁵⁶ և եունարեն *кѣмѣ* «ձիու սանձի քթափոկ» ու *кѣмѣ* «քթափոկ ղնել, սանձ եազցնել» ռադերը: Եթե ոուսերեն ռադը, մեր *կամամ*-ի նման, եուսալի ստուգարանություն չունի. ապա եունարեն ռադերին վերագրվում է ենդեվրոպակում ծագում: Նրա ազգակիցներն են եամարվում լիտվ. *kamuti* «ճնշել, խցել», *kānioš* «կաշվե սանձ», լատիշ. *kamut* «չարշարել», եին իսլադ. *hemia*, *hamda* «սանձը քաշել, ստիպել», մ.ր.գերմ. *benntien* «եետ պանել, արզելել»: Հր. Աճառյանը եունարենից է վոխառչալ եամարում եայ. *կեմ* «սիրա, խոտե պարան» ռադը. իսկ ենդեվրոպական տարրեր լեզուներից՝ առոր. *qama*, թրք. *gem* «սանձ» ռադերը⁵⁷: Բացառված չէ. որ հին պրուսերեն *camnet* «ձի» ռադը ևս եարում է ենդեվրոպական ռառարմատին եանգող այս նույն թառախմրին: Պրուսերեն ռադի -et վերջնամասը եամարվում է հ.-ե. լեզուներին ընորոշ և կենդանիների անուններ կերտող մի վերջածանց⁵⁸: Այս տեսանկյունից եմմա. եայ. *րոռ* և *բրեա* ռադերը⁵⁹: Ար. նույն վերջածանցն է Գր. Ղափանյանը տեսնում նաև եայ. *անճէտ*, *կրեւ* և *օկոէտ* ռադերի մեջ⁶⁰: Պրուսերեն *camnet* «ձի» թառի ազգակիցներն են ներկայացնում նաև լիտվ. *kamāne*, լատիշ. *kamene*

51. В. Топоров, Саранью, "МНМ", т. II, с. 409.

52. В. Топоров, Ашвины, "Мифологический словарь". с. 79.

53. «Մասնա ծոեր», հ. Ա, Երևան, 1936, էջ 1029:

54. Հր. Աճառյանի, նշվ. աշխ. ե. 2, Երևան, 1973, էջ 500:

55. սշու. աշխ. ե. 4, էջ 219:

56. "Этимологический словарь русского языка". том II, вып. 8, К, М., 1982, с. 299.

57. Հր. Աճառյան, նշվ. աշխ., ե. 2, էջ 571:

58. В.Н. Топоров, Прусский язык, Словарь, I-К, М., 1980, с.192.

59. Հր. Աճառյան, նշվ. աշխ., հ. 1, Երևան, 1971, էջ 472-473; Գ. Ջահուկյան, Հայոց լեզվի պատմություն. Նախագրային ժամանակաշրջան, Երևան, 1987, էջ 237, 355:

60. Գր. Ղափանյան, Հնէարանական մի քանի մնացորդներ եայերենում, «Տեղեկագիր ՀՍՍՀ գիտությունների և արվեստի ինստիտուտի», 2, Երևան, 1927, էջ 111:

(kamine), kamane «իշամեղու» բառերը⁶¹: Իմաստային զուգարանության լավագույն օրինակն են տալիս հայերեն *զամբիկ* և *զամբ-ուռ* բառերը: Ըստ երևույթին, ուրարտական սեպագրության Kam(a)ուս ցեղանունը նույնպես առնչվում է նույն կամ արմատին: Անվանակիր ցեղը բնակեցնում էր Սևանա լճի հարավ-արևելյան ափը⁶²: Իսկ Սևանի արևելյան ափին զուգահեռ ձգված լեռնաշղթան միջին դարերում հայտնի էր *Քաշաբաղ* (<քաշ-ա-թաղ) ասուսով: Այս լեռնաստանն ըստայ «սյակամ» ասուսաբանություն ունի: Հմմա. հայ *քաշիկ* (<քաշիկ) «քուռակ ունեցող ձի»⁶³: Kam(a)ուս ցեղանվան հետ ուղղակի կապ կարող է ունենալ Սևանի ավազանում (Գյոզլայի մահալ) ժամանակին գոյություն ունեցած *Կամասար* գյուղը անունը⁶⁴: Հմմա. *Կամ-ա-սար* և *Կամ-սար* (-ական):

Ուշագրավ է, որ *Կամասար*-ը որպես բառարարություն իր զուգահեռը չունի իրանական լեզուներում, բայց զուգահեռներ ունի՝ ի դեմս փոքրասիրական կարիացիների Camisares արական անձանվան և թոսպոլյան քրակացիների Κομοσαρσ/Καμασαρσ իգական անձնանվան⁶⁵: Ըստ այսմ, անհամոզիչ է առաջին անձնանունների եամար իրանական *kamasara («ըսա կամի իշխող»)՝ նախած կի վերականգնումը: Քանի որ իրանական ժողովարդները այդպիսի անձնանուններ երբևէ չեն գործածել, ավելի քան եավանական է դրանց բոլորին բավական-փոքրասիրական ծագում վերագրելը և անձնանվանական կիրառում գտած դիցանուն եամարելը: *Կամասար*-ի և նրա տարրերականների դիցանվանական ծագման վկան կարող է լինել այն իրողությունը, որ դրանց կրողները հասարակության վերնախավի ներկայացուցիչներն էին. Կամասարը Կամասարական նախարարական տոեմի եիմնադիրն էր և անվանադիր նախնին, Կամիսարևսը Կապարովկիայի կուսակալն էր, իսկ Κομοσαρσ/Καμασαρσ կոչվում էին Բոսսորի (կիմերական Բոսֆորի) եին հունական պետության թագուեիներից երկուսը:

Հնդեվրոպարաններն ասրցուցել են, որ իրենց ծագումով և լեզվամտածողությամբ մեր ենդեվրոպական նախնիների անհամոտ կյանգած եին եույների, եին իրանցիների և եին ենդիկների մտածելակերպին բնորոշ էր «ձի»-«գետ» առասպելարանական զուգորդումը: Հին հնդկական «Ռ-իզվեդան» յեռնային գետերի սրընթաց եոսքը պրակերում է «լեռներից պոկված, ինչպես ազաա արձակված զամբիկներ» բառերով⁶⁷: Հին և միջնադարյան իրանցիների գեաային աստվածությունները պատկերացվում էին ձիակերպ և իրենց արձաններն են ունեցել ծառս եղած ձիու տեարով⁶⁸: Նրանք գետերի աստվածություններին ձիեր էին գոհաթերում⁶⁹: Հին եունական ասասպելարանության մեջ գեաային աստվածությունները կարող էին լինել կաս դառնալ եովտոական և կեանկցվել մանկանացու կանանց եեա⁷⁰: Այս և նույնպիսի բազմաթիվ ավյալներ եիմք են տվել եայանի ենդեվրոպարաններ Պորցիզին, Ռ-ոզվադովսկուն, Տրուրաչովին, Իվանովին և Գամկրեյիձեին եեթադրելու, որ «ձի»-«գետ» առասպելարանական զուգորդումը բնորոշ է եղել եին ենդեվրոպական բոլոր ցեղերի լեզվամտածողությամբ և փաստարկ կարող է ծառայել ենդեվրոպական նախահայերեիքի լեռնային երկիր լինելու վերաբերյալ⁷¹:

61. В. Топоров, Прусский язык, с. 186.

62. Н. Арутюнян, *Աշխ.*, էջ 100-101:

63. Մ. Մախալյան, *Աշխ.*, հ. 4, էջ 549:

64. Թ. Հակոբյան, Մա. Միլիթ-Բախշյան, Հ. Բարսեղյան, Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, 2, Գ-Կ, Երևան, 1988, էջ 915:

65. L. Zgusta, Die Personennamen Griechischer Städte der Nördlichen Schwarzmeerküste, Praha, 1955, S. 281-282.

66. Հր. Աճառյան, Հայոց անձանունների բառարան, հ. 2, Երևան, 1944, էջ 577:

67. "Rigveda", Мандалы I-IV, Издание подготовила Т. Елизаренкова, М., 1989, с. 323.

68. О. Смирнова, Места домусульманских культов в Средней Азии (по материалам топонимики), "Страны и народы Востока", вып. X, М., 1971, с. 104.

69. Нивод., VII. 13-114 (Հ. փոդրառու, Պատմություն ինը գրքից, բարգմանությունը Միսն Կրկյաշարյանի, Երևան, 1986, էջ 419):

70. С. Аверинцев, Вода, "МНМ", т. I. М., 1979, с. 240

71. В. Порциг, Членение индоевропейской языковой области, М., 1964, с. 303; В. Орел, К вопросу о реликтах иранской гидронимии в бассейнах Днепра, Днестри и Южного Буза, "Вопросы языкознания", 1986, №5, с. 110.

Վերոհիշյալ հնդեվրոպարանները նաև բազմաթիվ օրինակներ են բերում ի հասաաաումն Ասիայի և Եվրոպայի հնդեվրոպական ծագմամբ գետանուններում «ձի» հասկացության արտացոլման: Հայկական «Չին գնաց, թամրը մնաց»⁷² հանելուկը՝ իր հանրահայտ «գետ և կամուրջ» պատասխանով, վկայում է, որ մեր հեռավոր մախանիների մտապատկերում ևս ձի գուգորդվել է գետի եեա: Լեռնային գետերի սրընթաց եռաքր նմանեցվել է ձիերի երամակների սրարշավ վագրին, դրանց փոփոխատար ալիքները՝ վարգող ձիերի եողմածուփ բաշերին, ջրվեժ-գետակների շառաչ-խոխոջյունը՝ ձիերի իրիւիւնջ-վրջյունին և այլն: «Չի»-«գետ» առասպելաբանական գուգորդման արգասիքները իրենց արտացոլումն են գանլ նույնիսկ եայ գրողների ստեղծագործություններում: Հիշենք Համո Սահյանի բանաստեղծություններից մեկի եեակյալ եատվածը.

«Եվ ձիու աեաք են առնում.
Ջրերը եանկած,
Եվ ձիւն ջրվեժ է դառնում
Քափ-քրտինք մտած:
Խեյքս իւլել է աստված,
Տարել երկի,
Ախր որտեղ է ասված
Տեսիլքն ավերվր...
Որ ջրերը դառնան ձի,
Եվ ձիւն փրփնջան,
Հեռու եեովից ձայն տան ինձ,
Կանչեն, վրնջան»:

Այս առումով ուշադրության է արժանի նաև Ակսել Բակունցի «Ծիրանի փողը» պատմվածքի եեակյալ եատվածը. «Լեռների վրա վրնջում է ին ձիւն՝ ինչպես սանձարձակ ուրախությունը, ինչպես սպիտակ ջրվեժը, որ իջնում է բարձրերից, թափով կարում ուշաը. խառնվում մի պղտոր գետի և ուրիշ ջրերի եետ գնում դեպի անեգր ծովը»:

Հայկական լեռնաշխարհի մի շարք գեաանուններ ևս իրենց ծագմամբ պարտական են եեոավոր ժամանակների եայի լեզվամտածողության մեջ «ձի»-«գետ» առասպելաբանական գուգորդման: Հին եայերը արու ձիւն կոչում էին նաև *գեղազատ* կամ *գեղազատ*⁷³: Ըստ սմեեայնի, այդ իմաստը պաըումակում է բառի գել կամ գեղ բաղադրիչը, որովեետև մյուս բաղադրիչը՝ *ազատ*-ը, այս դեպքում «վայրի» է նշանակում: Հմմտ. *ազատքող* բուսանունը, որն ուղղակի «վայրի քեղ» է նշանակում:⁷⁴ Այս գել-/գեղ-արմաաին եանդիպում ենք նաև պատմական Հայաստանի մի շարք լեռնային գեաակների անունների մեջ: Դրանցից են. *Գեղառաշ, Գելուա, Գեղաթառ, Գեղավու, Գեղի, Գեղիկ, Գեղին, Գեղուն*:⁷⁵ Պատմական Հայաստանում գոյություն ունեին նաև ասոգ «ձի» բաղադրիչը պարունակող *Ասպական* և *Ասպաեեև* գետանունները:⁷⁶ Հմմա. *ասպարեգ, ասպանդակ, ասպատակ* բառերը (<իրան. asp, āspa «ձի»):

Պատմական Հայաստանի «Չի» հասկացությունն արտացոլող գետանուններից արժե կանգ առնել եատկապես *Երասխ* և *Մուրաա* գետանունների վրա, որովեետև դրանք կրողները եայոց մայր գետերն էին: Արաքսի եին *Երասխ* անունը սերտ աղերս ունի

72. Մ. Հարությունյան, *Եայ ժողովրդական եանելուկներ (ուսումնասիրություն), Երևան, 1960, էջ 126: Նույնի, Հայ ժողովրդական եանելուկներ, էջ 176: «Լեռնային Ղարաբաղի բանահյուսությունը», գրառումը, բնագրի պատրաստումը և ծանոթագրությունները Մ.Մ. Գրիգորյան-Սպանդարյանի, Երևան, 1971, էջ 399:*

73. Հր. Անաոյան, *Հայերեն արմաական բառարան, հ. 1, էջ 533:*

74. Նույն տեղում, էջ 83:

75. Թ. Հակոբյան, Սա. Մելիք-Բախշյան, Հ. Բարսեղյան, *Նշվ. աշիւ., հ. 1, Ա-Դ, Երևան, 1986, էջ 816, 820, 821, 825, 829-830, 832:*

76. Մ. Երեմյան, *Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, Երևան, 1963, էջ 38:*

հայերին *երաշխ* և պարսկերեն *ռաշխ* բառերի եեա: Այն ունի «կարմիր ձի» իմաստը: Ըստ Գրիգոր Մագիստրոսի, *երաշխ* նշանակում է «արյունագույն ձի», իսկ պարս. եամապատասխան բառի իմաստը «կարմրերանգ ձի», «երիվար» է և միևնույն ժամանակ ձիու անունն էր «Շահնամեի» եերոսաներից մեկի՝ Ռուսասմի⁷⁷: Հայերենի նման իրանական ծագում ունեցող *րախսի* վրացերեն բառը նշանակում է «դարչնագույն ձի, աշխետ»: Այն տառացիորեն նույնն է Արաքս գետի վրացական *Րախսի* անվանաձևի հետ: Ըստ Հ. Հյուրշմանի, *Երախս* գետանունը ևս նախապես ուներ *Րախս* ձևը, «գոր կրմանը վերաբերող գտնել եուն. Ա. րաքս-էս և վրաց. *Րախս-ի* ձևերուն մեջ»⁷⁸: *Երախս* գետանվան վերորերյալ տարբերակների եեա համաձագում են *Արախս* և *Արախշա* հին գետանունները:⁷⁹ Մրանցից առաջինը կրող գետը Մեծ Հայքի և Ատրպատականի սահմանն էր կազմում Ուրմիա (Կապուտամ) լճից եարավ-արևմուտք ընկած ասրածքում, իսկ երկրորդը կրում էր ներկայիս Թուրքմենստանի եարավում (հին Պարթևքի հյուսիսում) գտնվող մի գետ:

Մուրաա գետանունը, որն եայտնի է ուշ միջնադարից, Արածանիի (Արևելյան Եփրատի) նաև ժամանակակից անվանումն է: *Մուրաա* կոչվել են նաև եայ առասպելարանության թևավոր սպիտակ ձիերը: Նմանաենչությունությամ պատճառով այս բառը եամանի շիտթվել է արարական ծագումով *մուրաա/մուրաա* բառի հետ, որի իմաստը «իղձ, փափագ, նվիրական ցանկություն» է: *Մուրաա*-ը որպես առասպելական ձիերին տրված հատուկ անուն կիրառվել է «Մասնա ծոերում»: Այստեղ երբեմն այդ անվամբ ևն եամողես գալիս ուսյասու Քուռկիկ ջալալին, այնպես էլ Չենով Հովանի սպիտակ ձին: Ի դեպ, Չենով Հովանի երեք ձիերը՝ Կարմիրը, Անը և Մուրատը առասպելարանական Կարմիր, Սև և Սպիտակ ձիերն են՝ եայտնի նաև հայ ժողովրդական եեքիաթներից (եմմտ. նաև նույն գույներով երեք խոյերը, երեք դևերը և այլն): «Մասնա ծոերի պատումներից մեկում կարդում ենք.

«(Չենով Հովանը) կնաց կում.

ծեոք սարից վըր Գարմիր ծիուն.

ծին գրառիզ իչուց կեղին:

ծեոք սարից վըր Մեվ ծիուն,

Ասից.-Եփ գը եասցուս գովու տաշղ:

Ասից.-Վախթոց վախթ գը հասում:

Ասից.-էդ լը չէղա՛վ:

Կնաց վըր Մուրաաին, ասից.

-Մուրա՛տ Եփ գը եասցուս գովու դիխ;

Ասից.-Հըթ գքու Օդվին եասցուս գանգուն,

Քըզի գը եասցում գովու տաշղ»:⁸⁰

Մամասարի կին Դեղձունը *Մուրաա* անունով է դիմում Քուռկիկ Ջալալին, երր իր թոռանը՝ պատանի Դավթին, տեսնում է նրան եեծած: Ունկնդիրներին թյուրիմացության մեջ չթողնելու եամար, բանասացն ավելացրել է. «ծիու անուն մարթ չըր գիտի, մինտե եինք գրտեր, որ անուն Մուրատ էր»:⁸¹ Ըստ մեկ ուրիշ պատումի, Մուրատը (Քուռկիկ Ջալալին) թևավոր էր, որովեետև «Աղավնիկի դայդա կը թոներ. յոթ ավուր դոնախ էրկու սահաթվան մեջ գնաց»:⁸²

Այսպիսով, արևելյան Եփրատի միջնադարյան և նոր ժամանակների *Մուրաա* անունը պետք է ըխեցնել մեր նախնիների կողմից առասպելական թևավոր սպիտակ ձիերին տրված *մուրաա* անվանումից, որի բուն իմաստը «սպիտակ, պայծառ. ոչ սև» է (գրարարում այս բառի *մուր* արմատը գործածվում էր նաև «սև, մուր» իմաստով)⁸³:

77. Հր. Աճառյան, *Ոչվ. աշխ.*, հ. 2, էջ 39:

8. Հ. Հյուրշման, *Հին հայոց տեղայ անունները*, Վիեննա. 1901, էջ 340:

79. Ս. Երեմյան, *Ոչվ. աշխ.*, էջ 38-39; Մ. Դանձաբ, *Политическая история Ахеменидской державы*, М., 1985, с. 277:

80. «Մասնա ծոեր», հ. Բ, առաջին մաս, էջ 183-184:

81. Նշվ. աշխ., հ. 1, էջ 807:

82. Նույն տեղում, էջ 744:

83. Հր. Աճառյան, *Ոչվ. աշխ.*, հ. 3, Երևան, 1977, էջ 362:

Մուր-ատ բառի մասն *-ատ* (<հատ) ժխտական մասնիկով են կազմված նաև *փայլ-ատ*, *պոչ-ատ*, *կիս-ատ*, *փշ-ատ* և ուրիշ շատ բառեր: *Մուրատ* գեանավան «սպիտակ (ծի)» ստուգաբանության տեսանկյունից ուշագրավ է անվանակիր գեանի շատ ավելի եին *Արածանի* անունը: Վերջինս ևս պարունակում է «սպիտակ, պայծառ» իմաստը և իր *արած-արմատով* (<հ.-հ.*arg-) առնչվում է *արծ-աթ*, *արծ-ն-ել*, *արծ-արծ-ել* (<հ.-հ.*arg-) բառի եետ:⁸⁴ Անտարակույս, Արածանի գետը նաև Մուրատ չեր կոչվի, եթե մեր նախնիների լեզվամտածողության մեջ ամուր ցտած չլիներ «ծի», «գետ»՝ այս անգամ «սպիտակ ծի»-«սպիտակ գետ» առասպելաբանական գուգորդումը: Միևնույն ժամանակ պարզվում է, որ ենագույն ժամանակների առասպելաբանական պատկերացումներից սկիզբ առած «ծի»-«գետ» առասպելաբանական գուգորդումը հայի լեզվամտածողության մեջ, թեև ուղև մնացուկային ձևով, իր եետքն է թողել նրա եեաագա բազմադարյան կյանքի բոլոր ժամանակաեատվածներում:

Վերադառնալով շիրակյան իրողություններին, նշենք, որ Կամսարական ստեմանվան «ծիական» ստուգաբանության, իսկ տոեմի անվանադիր նախնի Կամսարի ծիակերպության մասին են իոսում ինչպես նախնադարյան Շիրակի և եարակից շրջանների վայրի ծիերի եայրենիքներից մեկը լինելու լիաստը, այնպես ու «ծի»-«գետ» առասպելաբանական գուգորդման արգասիք տեղական ջրանունները. այստեղ եսյունաբերված ծիերի բրածո մնցորդները վերաբերում են դեոևս վյուրմյան և մինդել-ոիսրսն դարաշրջաններին:⁸⁵ Մ.թ.ա. 3-րդ եագարամյակից ծին գործածվում էր որպես հեծկան, 2-րդ եագարամյակի սկզբից՝ մարտակառքի լծկան և պսւտամունքի առարկա էր արդեն այդ եագարամյակներում:⁸⁶ Ուրարական դարաշրջանում Շիրակը (էրիախի) և եարսից տարածքները Հայկական լեոնաշխարեի ծիաբուծակտն կարևոր կեոնարոններից էին:⁸⁷ Ուրեմն, այտոեղ ոչ միայն ծիարույծ, այլև ծիապաշտ ցեղեր էին բնակվելու: Դրանցից մեկի ստեմա-ցեղային ավագանուց էլ սերած էր լինելու եին (ոչ Կարենյան) Կամսարական նախարարական ստեմը:

«Չի»-«գետ» առասպելաբանական գուգորդման տեսանկյունից ուշագրավ է Կամսար անվան երկու բաղադրիչների աոկայությունը Հայկական լեոնաշխարեի աարեր շրջանների գետանուններում: Կամ-բաղադրիչն են պարունակում ճորոխի ավագանին պատկանող Կամծոր և Կամք գետակների անունները:⁸⁸ Հմմտ. նաև ներկայիս Իորի գեանի (Կուրի ձախակույմյան վաակի) եին Կամրեոն անունը:⁸⁹ Օտար գուգաեեոներից եմմտ. եին պրուս. *camnet*-ին և ոուս. *комонь*-ին աոնչվող լիավ. *Kamaine*, *Kamanys*, *Kamiantinis* լաաիշ. *Kamī*, *Kamenu-ure* ոուս. *Комеча* (<*Kam-est-ia) և այլ ջրանունները:⁹⁰ Կամսար անվան երկրորդ բաղադրիչը պարունակող գեանուններից նախ և աոաջ ուշադրության է արծանի ոույն ճորոխի սաորին եոսանքի եին Ապսարուս (*Apsarus*<Aթ-sar-) անունը:⁹¹ Այս գետանվան մեջ *sar*-ին նախորդող *ap*-բաղադրիչը բացաեայտ հ.-հ. ժագում ունի և նշանակում է «ջուր, գեա»:⁹² Նույն ճորոխի ավագանից ոչ եեոու էին գտնվում Արևմտյան Եիրատի ակունքները, որոնցից մեկը կոչվում էր Մարչամայ (<Մար-չամ-այ) Այստեղից էլ ոչ եեոու, Գայլ գետի վերնագավտոում, խեթական ադրյուրներն եիշատակում ևն Մարիյա (*Sarīia*<*sar-īia) գեաը:⁹³ Հայկական լեոնաշխարեին եարող Կապադովկիայով

84. Մ. Պետրոսյան, *Երկույն-երկեարկ տիեզերքի մասին առասպելաբանական պատկերացումը Հայկական լեոնաշխարեում*, «Լրարեր եասարակական գիաությունների», 1991, թիվ 2, էջ 129-130:

85. Լ. Աագյան, *Четвероногие ископаемые млекопитающие Армении*, Երեան, 1953, ս. 37, 53.

86. Մ. Եսայան, *Կաոամարտիկ գորամասերը և եեծելագորը եին Հայասաանում*, Երևան, 1994, էջ 12, 15, 82:

87. Մ. Արտյոնյան, *Земледелие и скотоводство Урарту*, Երեան, 1964, ս. 177-178.

88. Թ. Հակոբյան, Մա. Մելիք-Բախշյան, Հ. Բարսեղյան, *Նշվ. աշխ.*, էջ 920-925:

89. Մ. Երեմյան, *Նշվ. աշխ.*, էջ 54, 57:

90. Մ. Մ. Կոբորով, *Прусский язык*, ս. 186.

91. *Plin.*, *NH*, VI, 11, 1 (< Մանդայան, Հին Հայասաանի և Անդրկովկասի մի բանի պորբեմների մասին, Երևան, 1944, էջ 12):

92. Մ. Աոդրեև, *Раннеиндоевропейские корни с велярными спирантами*, «Вопросы языкознания», 1978, №5, ս. 49.

93. Մ. Կաոարյան, *Նշվ. աշխ.*, էջ 69-71:

և Կիլիկիայով եռսող գետերից մեկը անսլիկ եեղինակներին հայանի էր *Մարսո* (Σαρος) անունով:⁹⁴

«Չի»-«գետ» առասպելաբանական զուգոթյանն եետքերը նկատելի են նաև Շիրակի և եարակից շրջանների ջրանուններում: Այստեղ կունգ կառնենք *Արփա* (Արփաչայ) գետանվան և *Արփա* (Արփիլիճ, Արփալիճ) լճանվան վրա: Մրանցից առաջինը կրող գետը սկիզբ է առնում երկրորդ անունը կրող լճից: Որ այս երկու անունն էլ որևէ առնչություն չունեն թուրքերենի եեա, վկայում են հետևյալ փաստերը. 1) նրանց զուգաեեո *Հարպասոս* (Αρπασος < *arpas-os) գետանունը եիշաաակված է Հայաստանի հյուսիս-արևմուտքում ռեոևս մեգանեց 2500 աարի առաջ՝ եույն գորավար և պատմիչ Քսենոփոնի կողմից:⁹⁵ 2) նույնանուն գետ կա նաև Վայոց Չորում՝ եիշատակված 5-րդ դարում Եղիշեի կողմից:⁹⁶ 3) *Արփի* անունով գետակ կար նաև Մասունի Սոական գավառակում (պուսականում էր Տեգրիսե ավազանին), իսկ *Արփա*, նաև *Արփակ*, անունով լճակ՝ Գեղամա լեռներում (եավանարար, այդպես է կոչվել նաև նրանից սկիզբ առնող այն առուն, որը պուսականում է Գավառագեաի ավազանին):⁹⁷ Մրանք ռոյորը խոսում են Շիրակ-Աշոցքյան *Արփա*-ների վաղնջական ժամանակներից գալու և այդ արմատով ջրանունների Հայկական լեոնաշխարեով մեկ սիոված լինելու մասին: ավազանեք, որ Շիրակ-Աշոցքյան Արփա (Արփաչայ) գետը մեր ժամանակներում է, որ ընկալվել է որպես Ախուրյանի սկիզբ: Հնում Ախուրյանի սկիզբն էր եամարվում ոչ թե նա, այլ ներկայիս Կարս (Կարսաչայ) գետը:⁹⁸

Արփա-ն որպես եաստրակ ըաո մեգ եայտնի է Սովսես Խորենացու «Հայոց պատմությունից»: Հայ ազդեցիկ նախարարական տոեներից մեկի՝ Արծրունիների, ներկայացուլիչ Շավասպը եայոց թագավոր կարգվում պուսիկ արքայազն Շասուհին ասում է. «այո...ճանաչեմ եւ զիս արքայորդի ի սերմանէ Սանասարայ...Եւ զայս ասացեալ յոյժ քամահարար, ի ձիարձակարանէն արփայագնաց լինէր»:⁹⁹ Եոր Հայկագեան ըաոարանում կուրդում ենք. «Արվայագնաց լինել. որ եւ արփեգնաց կամ արփիագնաց լինել. Խաղալ գնալ իբրեւ ընդ արփի. եթերընթաց իմն լինել. իբրեւ Օդապարիկ ընդ Օդս թոչել. խոյանալ»:¹⁰⁰ Հ. Աճառյանը ևս արփայագնաց-ի եիմքում տեեանում է *արփ* «եթեր, օդից այնկողմ մինչև երեղեն երկիքն եղած միջոցը» ըաոը:¹⁰¹ Մեր կարծիքով, եամեմատարար ճիշտ մոաեցումն արտացոլված է Մո. Մալխասյանցի եեակյալ աողերում. «Արփայագնաց լինէր»-միայն այստեղ գործածված ըաո, որ ավանդարար հասկանում ու թարգմանում են՝ *սլանալ, խոյանալ, արագարար*, իբրև օդի միջով *եեռանալ* (ընդգծումները մերն են):¹⁰² Ուրեմն, *արփ* «եթեր և այլն» ըաոն այդ իմաստով այստեղ գործ չունի: Երա և *արփ*-բաղադրիչով ջրանունների առնչությունները մեգ ասանում են առասպելաբանական պատկերացումների այն ոլորտը, որի եեները ջրի և լուսի եամաաեղ պաշամումներն է: Իսկ արփ-արմաը Շավասպ Արծրունու եեո կապված դրվագում ուղղակի նշում է նրա ձիու սըընթաց վագըը՝ արքայի կամակատարներից խուսալիելու միակ միջոցը: Այս տեաանկյունից առանձնաեաաուկ ուշադրության է արժանի այն փաստը, որ *Ախուրեան* գետանունը ևս որպես եասարակ ըաո գործածվել է *ախորան /ախորան* աեքով և «սըընթաց ու աեեղ (գեա)» իմասաով:¹⁰³ Հակոր Կարնեցու «Տեղագիր Վերին Հայոց» երկում կարդում ենք. «Ելանեն թագում ակունք եւ լինի գեա սուր եւ սխորան եւ մաանէ անեուն ձորն ձիրանայ և Մաոչամու»:¹⁰⁴ Հր. Աճառյանը ուշադրություն է երավիրում այն եանգամանքի վրա, որ այդ երկում Ախուրեան գեաի անունը ևս ըերված է վերոեիշյալ աեքով. «Եւ գեան գայ Դարսայ եւ լԱնու, որ է ԱխՕրան»:¹⁰⁵

94. «Древнегреческо-русский словарь». составил И. Дворецкий, т. II, М., 1958, с. 1463

95. Хел., Аг. а. б., IV, VII, 18 (Քսենոփոն, Ամարասիս, թարգմանությունը Միմոն Կրկյաշարյանի, Երևան, 1970, էջ 103):

96. Եղիշե, Գ; Ս. Երեմյան, նշվ. աշխ., էջ 41:

97. Խ. Հակոբյան, Մա. Մելիք-Բախշյան, Հ. Բարսեղյան, նշվ. աշխ., հ. 1, էջ 511, 512, 513-514:

98. Ս. Երեմյան, նշվ. աշխ., էջ 32:

99. Մ. Խորենացի, Գ, ծն:

100. «Եոր ըաոգիրք եայկագեան լեզուի», հ. 1, Երևան, 1979, էջ 383:

101. Հր. Աճառյան, նշվ. աշխ., հ. 1, էջ 345:

102. Դ. Խորենացի, Հայոց պատմություն, Աշխարհարար թարգմ. և մեկնարանությունները Մա. Մալխասյանի, էջ 524, ծան. 3: 1:

103. Հր. Աճառյան, նշվ. աշխ., հ. 1, էջ 99:

104. Զակովր Կարնեցի, Տեղագիր Վերին Հայոց, Վաղարշապատ, 1903, էջ 47:

105. Հր. Աճառյան, նշվ. աշխ., հ. 1, էջ 99:

НЕКОТОРЫЕ ПРОЯВЛЕНИЯ МИФОЛОГИЧЕСКОЙ СВЯЗИ "ОБЛАКО - КОНЬ" И "РЕКА - КОНЬ"

РЕЗЮМЕ

С. ПЕТРОСЯН, Ц. ПЕТРОСЯН

В культуре индоевропейских народов в древности важное место занимало почитание всадницы-госпожи. Эта богиня часто представлялась в сопровождении двух молодых всадников. В эпосе "Сасна црер" не только близнецы Санасар и Багдасар, но и иногда их мать воспринимались в образе всадников. В народных верованиях и в эпосе они наделены и грозовыми чертами.

О мифологической ассоциации "облако"- "конь" говорит прежде всего слово qšwṛrḥ (q-šwṛ-ṛḥ) "кобыла", второй компонент которого- шwṛ, означает "облако, туча". Та же ассоциация отражена в следующих древнеармянских собственных именах урартского периода: Zambā-хороним (ср. q-šwṛ-ṛḥ "кобыла", шwṛ, шwṛ "облако, туча" qšwṛ, "снег на вершине горы", шwṛrḥ "гроза"); Sardi-теоним; Sardur- антропоним (ср. шwṛ-ṛḥ "кобыла" и шwṛ-ṛ "поразить молнией"). Сюда же относится второй компонент имени ʿšwṛšwṛ (ʿšwṛ-шwṛ)- эпонима древнеармянского нахарарского рода Камсаракан.

*Мифологическая ассоциация "река"- "конь" отражена в армянских загадках, в сочинениях поэтов и, в особенности, гидронимах Армянского нагорья. К числу последних относятся: Sardia (sar-ṛḥ)- в хеттских клинописных надписях, Σαρως и Arsarus (ar-sar-ṛḥ) в античных источниках (ср. шwṛ-ṛḥ "кобыла") ʿšwṛrḥ (ср. ʿšwṛrḥ "конь кроваво-красной масти"), ʿšwṛrḥ (ср. ʿšwṛrḥ < *šwṛ-ṛḥ "нетемный", т.е. "светлый"), ʿšwṛrḥ, ʿšwṛrḥ (ср. ʿšwṛrḥ "жеребец") и т. п.*